

րանների վերայ: Պաշտօնական կրօնական սինկրետիզմը¹⁾ չէր կարող չբխացնել կրօնական հասկացողութիւնների տարբերութիւնների նրբին ըմբռնողութիւնը, նրան շատ քիչ էին գնահատում: Իսկ քրիստոնէութեան մէջ, հէնց այդպիսի նորութիւնների մէջ է դաւանաբանութեան էութիւնը բովանդակւում: Հետևապէս, սինկրետիզմը կարող էր այդ դաւանաբանական կարծիքների նորութիւնների վերաբերութեամբ երկու տեսակ ներդրածել, կամ մարդկային համբերատար ոգի ցոյց տալ, և կամ անմիտ ճնշումն գործ դնել տարածայնութեան վերայ, համարելով այդ տարբեր կարծիքները անկարեւոր և ոչ էական:

Բոլորովին հակադրատեղեր էին ներկայացնում քրիստոնէական եկեղեցու պատմական աւանդութիւնները: Եկեղեցին իւր մէջ կրում էր անկախութեան և կրօնական ազատութեան ոգի: Երեք դար շարունակ եկեղեցին գոյութիւն ունէր ինչպէս մի պետութիւն միւս պետութեան մէջ, թէև պետութիւնից հալածանք էր կրում, բայց և այնպէս եկեղեցին անկախ էր իւր ներքին կեանքով և կազմակերպութեամբ: Այն ժամանակ, երբ պետական բոլոր իրաւունքները կենդրոնանում էին կայսեր ձեռքում, եկեղեցու իւրաքանչիւր անդամ իւր հոգևոր պաշտօնէութեան ընտրութեան մէջ ձայնի իրաւունք ունէր: Եւ քրիստոնեաները կարողանում էին օգտուել այդ իրաւունքից այնպէս գործնական կերպով, որ Հռոմի պետական անձինք ցաւելով նրանց օրինակ էին բերում կվիրիաներին²⁾:— Շնորհիւ այդ բանի, քրիստոնէական եկեղեցին ձեռք էր բերել արդէն հաստատուն կազմակերպութիւն, աշխարհականների բարոյական կախումը կղերից և կղերականնե-

1) Սինկրետիզմ—ընդհանուր անուն փիլիսոփայութեան մէջ այնպիսի ուղղութեան, որի մէջ արհեստական կերպով միացած են տարբեր՝ մինչև իսկ հակառակ սխառեմներ: Նեղ մտքով սինկրետիստներ կոչւում էին Աղէքսանդրիոյ դպրոցի ներկայացուցիչները և մի քանի նոր-Պղատոնական—քրիստոնեաներ:

2) Հին Հռոմում զինւորականներին հակառակ քաղաքացիներ:

րինը եպիսկոպոսներից, վերջիններիս սրբազան իրաւունքները—այս բոլորն այնպէս հաստատուն հիմք էին դաել, որ մեծ յաջողութեամբ կարող էր արտաքին ճնշումներին դիմադրել:

Այն տարբերութեան դիտակցութիւնը, թէ ի՞նչ է պատկանում Աստուծուն և ի՞նչ կայսեր,—եկեղեցական կեանքի հին շրջանի մէջ պարզուեց հէնց ամենաէական կէտի վերաբերմամբ, այն է կրօնական համոզման ազատութեան խնդրում: Կլասսիկ պետութիւնը թոյլ էր տալիս երկրը պազել մի միայն այն աստուածութիւններին, որոնց ինքը ճանաչել և պաշտօնապէս թոյլատրել է: Կիկերոնի կարծիքով օրէնսդրութեան սկզբունքն այն է, որ ոչ ոք ոչ մի ուրիշ Աստուած չպէտք է պաշտէ, nisi publice adscitos, բացի պետական իշխանութեան ընդունածներից: Այս բացասական կողմի հետ սերտ կերպով կապուած էր դրականը, թոյլաւութիւնը դառնում էր ստիպողական պարտականութիւն: Մեկենսաբար խորհուրդ էր տալիս Օգոստոսին՝ «Ատիր և պատժիր նրանց, որոնք օտար աստուածներ են ներմուծում: Պատուիր աստուածներին նախնեացդ սովորութեան համեմատ և ուրիշներին էլ ստիպիր—*ἀνάγκη*—յարգել նրանց»: Ընդհակառակը, քրիստոնեան բացի իւր սեպհական կրօնական զգացմունքից, կրօնական խնդիրների մէջ ոչ մի ուրիշ օրէնսդրութիւն չէր ճանաչում: Կլասսիկ պետութեան պաշտօնական կրօնին հակառակ, որ միակ թոյլատրուածն էր, և որը դաւանելը պարտադիր էր բոլորի համար և պաշտպանւում էր ստիպողական միջոցներով, —քրիստոնեաները հաւատի ազատութիւնը դրին: Հաւատի գործերի մէջ քրիստոնեան ուրիշ օրէնսդրութիւն չէր ընդունում, բացի իւր սեպհական կրօնական զգացմունքից և խղճից, որոնք արտայայտուած էին որոշ կրօնական համոզմունքների մէջ: Քրիստոնէական գրողներն ոչ միայն այս սկզբունքը արտայայտեցին, այլ և հիմնաւորեցին խիստ զօրեղ հոգեբանական պատճառաբանութիւններով:

«Իրաքանչիւր մարդ, գրում էր, Տերտուլիանոսը,


բնական իրաւունք ունի և իշխանութիւն յարգելու այն, ինչ որ նա երկրպագելու արժանի է համարում: Որոշ մարդու կրօնը ուրիշ ոչ ոքի ոչ օգուտ և ոչ վնաս կտայ: Սակայն կրօնին հակառակ է որևէ մէկին ստիպել, որ նա կրօնական յարգանք ունենայ: Այդ յարգանքը պէտք է լինի կամաւոր կերպով և ոչ ճնշման ազդեցութեան տակ, որովհետև զոհաբերութիւնն էլ հոգու ազատ տրամադրութիւնից է պահանջւում: Հետևապէս, եթէ դուք մեզ ստիպէք զոհաբերութիւն անել, դրանով ձեր աստուածներին ոչ մի հաճելի բան արած չէք լինի: Նրան հաճելի կարող չէ լինել ստիպողական զոհաբերութիւնը, եթէ միայն նրանք պահանջկոտ չեն: Իսկ Աստուած կարող չէ պահանջկոտ լինել: «Տեսէք, արդեօք ձեր անկրօնականութեան համար փաստ չի կարող լինել և այն, որ դուք մեզանից խլում էք կրօնական ազատութիւնը և մեր՝ դէպի Աստուածութիւնն ունեցած ձգտման վերայ արդելք դնում, այնպէս որ, ինձ թոյլ չեն տալիս յարգել նրան, ում կամենում եմ, ստիպում են յարգել նրան՝ ում չեմ ցանկանում: Չէ՞ որ, ոչ ոք, նոյն իսկ մարդ չի ցանկանալ, որ իրեն յարգեն ահամայն:

«Կարիք չկայ ճնշման դիմել», — ասում է Լակտանցիոսը, որովհետև կրօնը բռնադատելով տալ չի կարելի. որպէս զի կրօնը ծաղի ինքնակամ կերպով, պէտք է դործել խօսքով և ոչ թէ հարուածներով (*verbis potius, quam verberibus*): Կրօնը պէտք է պաշտպանել ոչ թէ սպանելով, այլ մեռնելով, ոչ թէ խստութեամբ, այլ համբերութեամբ, ոչ թէ չարազործութեամբ, այլ աղնուութեամբ: Իսկ եթէ դու կը կամենաս կրօնը պաշտպանել արիւնհեղութեամբ, տանջանքներով, չարազործութեամբ, այն ժամանակ դու ոչ թէ կապաշտպանես կրօնը, այլ կանարդես և կը վիրաւորես նրան: Որովհետև, չկայ մի այնպիսի (կամաւոր) ազատ բան, որպիսին կրօնն է, և եթէ զոհ բերողը սրտանց չէ մատուցանում, այն ժամանակ կրօնը ոչնչանում է, նա այլ ևս ամենևին գոյութիւն չունի (*jam sublata, jam nulla est*)» (Instit. divin. V, 19):

Ինչպէս այստեղից երևում է, քրիստոնեաները մըտնում են մի նոր շրջան կրօնական ազատութեան սկզբունքների վերաբերութեամբ կազմած պարզ դիտակցութեամբ և շատ ղեղեցիկ կերպով պատճառաբանութեամբ: Հարցը, այսպէս ասած, դաւանաբանական հողից փոխուած է պարզ բարոյականի: Հեթանոս կառավարութեանը նախատում էին ոչ թէ միայն նրա համար, որ նա զրաւում է մարդկանց սուտ աստուածներին պաշտելու, այլ նրա համար, որովհետեւ նա դիմում է ճնշման, դործում է ոչ թէ համոզմունքով, այլ հարկադրելով, և դրանով հակասում է հէնց կրօնական յարաբերութիւնների էութեանը: Միևնոյն կերպով, եկեղեցական համայնքի կազմակերպութիւնն էլ այնպիսի հաստատուն ձևեր ընդունեց, որ նա ամենայն յաջողութեամբ կարող էր արտաքին ճնշումներին դիմանալ, այն բարոյական կախումը որ, աշխարհականները ունէին հոգևորականներից ստորին կարգի հոգևորականները — եպիսկոպոսից, որը հիմնուած էր քահանայութեան, աստուածային խորհրդաւոր բնաւորութեան հաւատի վերայ, մեծ յաջողութեամբ կարող էր արտաքին ճնշումներին դիմանալ:

Ահա սրանք են եկեղեցու և պետութեան մէջ ուղիղ կամ սխալ յարաբերութիւնների զարգացման համար տեսական եղանակները: Այս նոր դաշնակցութեան ներկայացուցիչներ հանդիսանում են մի կողմից — թագաւորը, — որ քրիստոնէութիւնը շատ էլ խորը չէր ըմբռնում, և արամադիր էր նրան նայելու, ինչպէս մի քաղաքական ոյժի վերայ, որը կարող է պետական սխառեմի համար ամուր հիմք լինել. բայց և նա ընդունակ էր նաեւ գնահատելու նրան, և հաւատում էր թէպէտ առանց խիստ ոգևորութեան, սակայն անկեղծ: Նրա հոգին փակ չէր քրիստոնէական ներկայացուցիչների բարերար ազդեցութեանց համար. նա, ըստ երեոյթին բոլորովին տրամադիր էր հրաժարուել հեթանոսական հաւատալիքներից, սակայն կա-

բող է անգիտակցաբար քրիստոնէութեան վերաբերու-
թեամբ այնպիսի դիրք բռնել, ինչպիսի դիրք որ հա-
հեթանոս ծիսակատարութեանց մէջ ունէր, իբրեւ ծայ-
րագոյն ներկայացուցիչ: Միս կողմից, — դաշնագրութեան
անդամ հանդիսանում են հաւատացեալները, որոնց մէջ
պատմականօրէն առաջացած էր պարզ գիտակցութիւն
պետութիւնից ունեցած իրենց անկախութեան վերաբե-
րութեամբ, իրենց ազգային բնաւորութիւնների տարբե-
րութեան համաձայն և որոնցից ոմանք, ընդունակ են
այս ազատութիւնը պաշտպանել արտաքին ոյժից (լուկ)
անմճոռղաբար, անիմաստ կերպով, իսկ ուրիշները —
(պատրաստ) ազատութեան կռիւը դարձնելու գերիշխանու-
թեան կռիւ:



III ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԾԻ ԺԱՄԱՆԱԿԻՑ
ՍԿՍԱԾ

1. Կոստանդին Մեծի եւ նրա որդւոց կրօնական
քաղաքականութիւնը:

Ինչո՞վ իրապէս արտայայտուեցին քրիստոնեայ կայսեր թագաւորութեան առաջին օրերում եկեղեցու և պետութեան միջի այս յարաբերութիւնները:

Արդեօք պետութիւնը եկեղեցու գոյութեան իրաւունքը ճանաչո՞ւմ էր ինչպէս մի անկախ համայնքի, որը իւր որոշ նպատակն ունի, և որը կարող է, և պէտք է իւր միջոցներով իրականացնի այդ նպատակը: Տեսակահապէս, այս հարցերին պարզ ձևերով դեռ ևս ճիշտ և որոշ պատասխան չի տրուած, սակայն որքան նր կարելի է դրա մասին դատել, այդ պատասխանը դրական կլինէր. այնուամենայնիւ այս յարաբերութիւնների մէջ գործնականապէս կարեւոր հարցը հեռու է գտնուում այդ բնդհանուր ձևերից: Այդ կարելի է որոշել այսպէս. եթէ քրիստոնէական եկեղեցին մի այնպիսի հաստատութիւն է, որի բարօրութեան և բազմակողմանի զարգացման համար պետութիւնը կարող է շահագրգռուած չլինել, այն ժամանակ նա ի՞նչպէս կարող է եկեղեցու ծաղկման օժանդակել: Մի խօսքով, հարցը եղանակի մասին էր, թէ պետութիւնը եկեղեցուն ինչ ձևով պէտք է հովանաւորէ: Որ նա կարող էր հովանաւորել, դրա համար չէին կապաւածում, որ նա — իւր կողմից, որպէս ինքնուրոյն հաստատութիւն, կարող էր հովանաւորել եկեղեցուն, չշեղուելով իւր սեպհական նպատակից, — այդ մասին խօսք անդամ լինել չէր կարող: Սակայն այդ աղղեցութեան համար ի՞նչպիսի միջոցներ կային: Պէտք էր արդեօք պետութիւնը

սահմանափակուէր միայն բացասական միջոցներով, հեռացնելով զուս արաքին այն արգելափթիկները, որոնք հէնց ինքն էր առաջ բերել եկեղեցու ճանապարհին: Թէ՞ նա կարող էր ներգործել եկեղեցական կեանքի վերայ և դրականապէս՝ նրա համար բարեյաջող հանգամանքներ ստեղծելով, — կամ թէ անմիջապէս եկեղեցական ներքին յարաբերութիւններին միջամուխ լինելով: Վերջապէս, այս վերջին դերի մէջ եկեղեցու վերաբերութեամբ չի՞ կարող որոշ իրաւունք իրեն վերագրել:

Կոստանդին Մեծի, իբրև եկեղեցու հովանաւորի, առաջին քայլերն այնպէս էին, որ չի կարելի նրանց դատապարտել նոյն իսկ եթէ նայենք խնդրին այն տեսակէտից, թէ պետութիւնը եկեղեցու գործերի մէջ ամենին միջամուխ չպիտի լինէր: Մինչև այդ ժամանակ պետութիւնը օրինական չէր ճանաչում քրիստոնէութիւնը. արգելում էր այդ համայնքին միանալ. հալածանքների ժամանակ յարքունիս գրաւեցին և կամ մասնաւոր անհատների վաճառեցին եկեղեցիները և եկեղեցու անշարժ կայքերը: 313 թ. Միլանի հրովարտակով Կոստանդինն իրաւունք էր տալիս ամենքին էլ, ով ցանկանում է, քրիստոնէութիւն ընդունել. հրամայեց քրիստոնեաներին վերադարձնել նրանցից խլած կայքերը և արգելեց հեթանոսական հասարակական զոհաբերութիւններին քրիստոնեաներին մասնակից անելը: Ինչպէս օրէնքով ճանաչուած համայնք, քրիստոնէական եկեղեցին իրաւունք է ստանում հոգևոր կտակներով նուիրաբերութիւններ ընդունել: Հոգևորականները ազատոււմ են հասարակական ծանր պաշտօններից և պարտաւորութիւններից, և այս դէպքում նրանց համար զօրութիւն է ստանում այն արտօնութիւնը, որից օգտոււմ էին ոչ միայն հեթանոս քուրմերը, այլ և բժիշկները, հռետորները, հրէական սինագոգաների ներկայացուցիչները: Գաղտնիքով և միւս աշխատանքները դադարում են «արժանահարգ արեգակի օրը, venerabili die solis» (321 թ.): Մի խօսքով, մինչև այժմ ցոյց տուած իւր հովանաւորու-

Թեամբ Կոստանդինը սովորական օրէնստուի դերից չէ դուրս գալիս, իսկ վերջին օրէնքի մէջ նա նոյն իսկ երեւում է pontifex maximus: Եկեղեցու սահմանները մտնելու ոչ մի նշոյլ չկայ. հեռացւում են միայն արտաքին արհեստական արգելքները և նրա անդամների գործունէութեան համար ընդարձակ ասպարէզ բացում:

Կոստանդինի դէպի քրիստոնէութիւնն ունեցած առանձնայատուկ յարաբերութիւնը, նրան ղեկավարող քաղաքական հաշիւըը նկատւում է, լոկ, 313 թ. հրատարակած ամենաառաջին օրէնքներից մէկի մի գծի մէջ: Ափրիկայի պրոհոնսուլ Անուլինոսի անուամբ տուած այս հրովարտակի մէջ ասուած է, որ «կաթոլիկ եկեղեցու հոգևորականներին, որոնց ներկայացուցիչն է »Յեցիլեանոսը» (Կեկելիանոս), բոլոր տեսակ արքունի պարտաւորութիւններից ազատութիւն է տրուած: Այս շնչին, ըստ երևոյթին, խօսքերի մէջ ծածկւած է այն միտքը, թէ հերետիկոսների և հերձուածողների հոգևոր դասի վերայ այս օրէնքները չեն տարածւում: Պարզ է, որ Կոստանդինը, քրիստոնէութեան վերայ նայում էր իբրև մի ոյժի վերայ, որը պետութեան կապերը պէտք է ամրացնէ, իւր նպատակին հակառակ գործած կլինէր, եթէ ի հաշիւ պետութեան պաշտպանել սկսէր քրիստոնէութեան մէջ երևան եկած անբնական երևոյթները, որոնք թուլացնում էին նրա միութիւնը:

Այս հրովարտակը պատճառ եղաւ, որ Կոստանդինը զոնապետանների հարցի պատճառով եկեղեցու հետ մի շարք յարաբերութիւններ սկսեց: Միևնոյն 313 թ. նոյն պրոհոնսուլ Անուլինոսն ուղարկեց Կոստանդինին զոնապետանների libellum-ը, որի մէջ սրանք դիմում են նրան, իբրև մի արդարադատ թաղաւորի, այն Կոստանդին Քլորի որդուն, որը միայն քրիստոնէականներին չհալածեց, — և խնդրում են Գալլիայից իրենց դատաւորներ տալ, որպէս զի Կարթագէնի եպիսկոպոս Յեցիլեանոսի հետ իրենց վեճերը վերջացնել կարողանան: Կոստանդինի հրամանով ժողով եղաւ 313 թ. Հռովմում Մելքիադէս պապի նախագահութեամբ (15 իտալ. եպիսկոպ. և 3 Գալլիայի եպիսկ.), նա գործը

վճուեց ընդդէմ Դոնատեանների: Սրանք բողոքեցին վճռի դէմ այն հիման վերայ, թէ ժողովի հայրերը իրենց գանգաւորի մի քանի կարեւոր կէտերը անբաւարար կերպով են քննել: Այդ հարցի մանրամասը քննութիւնը Կոստանդինը յանձնեց հէնց տեղում՝ Ափրիկայում, պրօկոնսուլ Նդիանոսին և նոր ժողով նշանակեց Արլ քաղաքում 314 թ. (օգոստոսին): Այս ժողովի վճիռն էլ յօգուտ Դոնատեանների չեղաւ: Սակայն նրանք սրանով չբաւականացան և բողոքեցին կայսեր դատաստանին: Այս հանգամանքը Կոստանդինի մէջ խիստ դժգոհութիւն առաջ բերեց: «Ինչ անիմաստ յամառութիւն, ինձանից խնդրում են դատաստան, մինչդեռ ես ինքս Քրիստոսի դատաստանին եմ ապաստում. եպիսկոպոսների վճիռը պէտք է ընդունել այնպէս, որպէս թէ ինքը Տէրը նախագահելիս լինէր դատաստանին»: Կոստանդինը սկզբում իրեն անձեռնհաս համարեց ժողովում վճռուած գործը վերաքննել: Ապա նա դիջեց Դոնատեաններին անընդհատ խնդիրներին, որովհետեւ նրանք պալատական շրջաններում պաշտպաններ էին գտել. գուցէ և նա մտածում էր շփոթութիւնների առաջն առնել, որոնք կարող էին առաջ բերել վճռից անբաւական Դոնատեանները: Այս անգամ կայսրը 316 թ. (նոյեմբերին) նրանց եպիսկոպոսներին վճուեց աքսորել և եկեղեցիները յարքունիս գրաւել: Այդ վճիռը 321 թ. փոխուեց, — և աղանդաւորներին կրօնի կատարեալ ազատութիւն տրուեց, որով և օգտւում էին նրանք մինչև Կոստանդինի մահը:

Ահա թէ ինչ տեսակ էր այդ տարօրինակ գործի ընթացքը: Եկեղեցական գործերին չխառնուելու գործնական առաջին դասն էր այս, որ քրիստոնեայ եպիսկոպոսները տուին կայսեր, որ գուցէ նորն էր դարձած հեթանոսութիւնից: Մի բաւական համանման օրինակ է ներկայանում Պօղոս Սամոսատացու գործը: Այս ազնուատոհմիկ եպիսկոպոսը, որին գահազուրկ արաւ ժողովը, չէր կամենում իւր բռնած եպիսկոպոսական տունը թողնել: Նրան գահազուրկ անողները ստիպուած էին ուստիկանութեան օգնութեան դիմելու և խնդրեցին Աւրելիանոս

կայսեր անհնազանդ եպիսկոպոսին աքսորել: Հեթանոս
կայսրը գործը վճռեց յօգուտ նրանց, որոնց հետ Հռով-
մի և Իտալիայի եպիսկոպոսները յարարերութիւն էին պահ-
պանում: Դոնատեանների գործը նոյն իսկ այդպիսի արդա-
րացուցիչ հանգամանք էլ չունի: Այս մարդիկ այնքան
քիչ էին յարգում եկեղեցու յարարերութիւնների ներքին
ազատութիւնը, որ ուղղակի սկսեցին դիմել աշխարհական
իշխանութեան: Հաղիւ թէ նրանց դրդիչ պատճառները
շահագիտութիւնից զուրկ լինէին: Եթէ դատաստանը նրանց
ճանաչէր իբրեւ կաթոլիկ եպիսկոպոսներ, այդ կայսեր համար
մի գեղեցիկ առիթ էր նրանց վերայ տարածելու, կամ թէ
շնորհելու նրանց էլ այն արտօնութիւնները, որ նա կաթոլիկ
հոգևորականութեանն էր տուել: Այսպիսով Դոնատեանների
համար բոլորովին աւելորդ չէր, որ կայսրը ծանօթացաւ
նրանց գործերին: Նրանց գանգատները կայսեր ստի-
պում են, հակառակ իւր ցանկութեան, եկեղեցական գոր-
ծերի մէջ խառնուելու: Հռովմի ժողովի վճռի դէմ տուած
նրանց գանգատները ստիպում են կայսեր դատաստա-
նական այս գործի մէջ իբրեւ քննիչ քաղաքական պաշ-
տօնեայ նշանակել: Բարեբաղդարար դրա դերը դիւանա-
կան տեղեկութիւններ քաղելով էր սահմանափակում: Արդ
քաղաքի ժողովի նոր վճիռն էլ չի գոհացնում նրանց,
որովհետեւ վճիռն իրենց հակառակ էր, և նրանք եկեղեցա-
կան դատաստանի դէմ բողոքում են կայսեր դատաստանին:
Կարծես թէ նրա վճիռը, եթէ նոյն իսկ դա Դոնատեանների
համար բարեհաջող էլ լինէր, բաւական էր նրանց կաթոլի-
կութեան բնաւորութիւն տալու: Եկեղեցու գործերի մէջ
խառնուելու առաջին օրինակն ինքը կայսրը տուեց: Սակայն
Դոնատեանների վերաբերմունքի մէջ այնպէս զօրեղ կերպով
արտացոլում է եսական կողմը, իսկ կայսրը այնքան երկար
ժամանակ—ի պատիւ ինքնակալ կայսեր և pontifex maximus-ի
այնպէս բարեխղճութեամբ դէմ դրեց եկեղեցու գործերին
չխառնուելու խղրին, որ ստիպուած ենք խոստովանել,
թէ, եթէ այս գործի մէջ ուրե է մէկը իւր աստիճանից ստոր

դիրք էր բռնել, յամենայն դէպս դա կայսրը չէր¹⁾։

Դոնատեանների գործերից Կոստանդին Մեծը կարող էր երկու հետեւութիւն անել. ա) կան քրիստոնէութեան ներկայացուցիչներ, որոնք պատրաստ են ճանաչելու կայսեր ընդարձակ իրաւունքը եկեղեցական գործերին միջամտելու համար, նոյն իսկ նրա իրաւասութիւնը ժողովներից բարձր դնել. բ) բռնի միջոցները, որոնք ձեռնարկուած են եկեղեցու միութիւնը հաստատելու նպատակով, ամէն ան-նպատակին չեն հասցնում։

Եկեղեցու գործերի մէջ Կոստանդինի միջամտիւն լինելու յաջորդ դէպքը տեղի ունեցաւ Արևելքում։ Դրա պատճառը արիոսական վէճն էր։ Ինչպէս նախորդ դէպքում, Կոստանդինն այստեղ էլ եկեղեցական խաղաղութեան շահերի պաշտպան հանդիսացաւ։ Տարբերութիւնը միայն նրա մէջ էր, որ այստեղ ինքը միջամտեց գործին առանց իրեն դիմումի։ Այդ բարեկամական յորդոր էր հաշտութիւն հաստատելու. բայց որովհետեւ կայսրը շատ թոյլ էր հասկանում հարցի դաւանարանական նշանակութիւնը, ուստի և նա վճռող կողմերի մէջ հիմք չկարողացաւ ստեղծել։ Հաւանականօրէն շրջապատող եպիսկոպոսները հասկացնում են Կոստանդինին թէ եկեղեցու խաղաղութեան համար իբրեւ միջոց անհրաժեշտ է Տիեզերական ժողով գումարելը։ Այն դերը, որ եկեղեցու հայրերը տուին Կոստանդինին, բաւական մեծ էր։ Հաւանականօրէն, նրա միջամտութիւնն էր պատճառ, որ ոմանք զօրեղ կերպով տրամադրուեցին «համադոյ» արտայայտութիւնն ընդունելու։ «Լսելով մեր հաւատի այս բացատրութիւնը, գրում է Եւսեբիոս Կեսարացին, ոչ ոք դրա դէմ առիթ չգտաւ հակաճառելու. ընդհակառակը, մեր գերազոյն ատուածաւէր կայսրն անգամ — առաջինն ինքը հաստատեց, որ մեր բացատրութիւնը կատարեալ սւղղափառ

1) Հետաքրքիր է այն հանգամանքը, որ 347 թուին Դոնատը հրաժարուեց կայսեր լիազօրների ձեռքով նուէր ընդունելուց ասելով՝ «Ինչ գործ ունի կայսրը եկեղեցու մէջ»։ Իսկ և, դարում Դոնատեան եպիսկոպոսներից Պետլիլիանը խիստ զօրեղ կերպով պաշտպանում է խղճի ազատութիւնը հակառակ Օգոստոսին։

է. «Ես էլ, առաջ նա, այդպէս եմ ըմբռնում», և հրամայեց բոլորին ընդունել այդ, ստորագրել այդ դաւանանքները և համաձայնուել դրանց, աւելացնելով միայն մի խօսք՝ «համագոյ»։ Այստեղ կայսրը ճառ է ասում։ Այդ ճառի տոնը քրիստոնէական հայեցակէտից շատ բարձր էր մի մարդու համար, որ նորահաւատ էր լուի։ Նա ըստ երևոյթին ունէր, թէև խորհրդակցական, ձայնի իրաւունք։ Կայսեր դաւանաբանական խնդիրներին թափանցելու կարողութիւնը այդ ժամանակ այնքան սահմանափակ էր, որ նա շատ մութն էր պատկերացնում իրեն «ծնեալ նախ քան զյաւիտեանս» խօսքերի նշանակութիւնը։ Ժողովը վերջացաւ արիտսականութեան դատաւարութեամբ և նրա գլխաւոր հետեւողների պաշտօնագրերով։ Իւր կողմից կայսրը կարգադրեց արքային արիտսականութեան յամառ կռնակիցներին, հրամայեց արիտսականներին Պորֆիրիոսի հետեւողներ անարգական անուամբ կոչել և այլեւ արիտսականների բոլոր գրուածքները՝ սպառնալով մահուան պատիժ տալ նրան, ով որ կ'աշխատի թազցնել այդպիսիները։

Այսպիսով, հէնց Տիեզերական առաջին ժողովից սկսւում է հաւատի հալածանքը հերետիկոսների դէմ՝ քրէական դատաստանի միջոցով։ Կրօնական հալածանքի աննպատակ լինելու զօրեղ գիտակցութիւնը, նրա կրօնական զգացմունքի հէնց էութեանը անհամապատասխան լինելը, — ակնյայտի կերպով նաեմանում է։ Գոնեա Կոստանդնի այս դործողութիւնների դէմ եկեղեցու հայրերը չբողոքեցին։ Եկեղեցու և պետութեան յարաբերութեան պատմութեան մէջ այս բաղէն կարևոր նշանակութիւն ունի։ — Կարիք չկայ ժողովի անունից կայսեր ուղղած ճառը իսկական համարել. «Ներկայ ժողովի և մեր խորհրդածութեան պատճառը մոլեղնաց Արիոսն է... Որովհետև Միածին Որդուն և Բանն Հօր համագոյակից և Հօրը հաւասար չէ ընդունում... Հրամայիր, ով կայսր, որպէսզի նա թողնէ իւր մոլորութիւնը, չ'ապստամբէ առաքելական վարդապետութեան դէմ, իսկ եթէ նա հաստատ է մնում իւր պիղծ կարծիքների մէջ, հալածիր նրան ուղղափառ եկե-

դեցու համայնքից, որպէսզի թոյլ հաւատացեալների հաւատը իւր պիղծ կարծիքներով չխախտէ»։ Յամենայն դէպս փաստն այն է որ ժողովի որոշմանը պետական օրէնքի նշանակութիւնն է տրուում։ Հերետիկոսների դէմ արձակած եկեղեցական դատաւարութեանը գուզընթացաբար հետևում էր պատժական միջոցներ պետութեան կողմից, և որչափ յայանի է, եկեղեցու ժողովի հայրերը կայսեր այդպիսի նախանձախնդրութեան դէմ ոչ մի խօսքով չեն բողոքում։ Նոյն իսկ այստեղ հարց չի կարող լինել այն մասին, թէ այդ իրողութեամբ քրիստոնեայ շաղագոյնների պերճախօսութեամբ պաշտպանած խղճի կրօնական ազատ համոզմունքի, իրաւունքներն են խախտում, (ճնշումն մարդու հոգու վերայ, որ գերազանցում էր նոյն իսկ հեթանոս թաղաւորների գործելակերպին, այնտեղ պահանջում էր՝ «Դու այս արձանին դո՛ւ մատուցիր, իսկ թէ արձանի մասնն ի՞նչ ես մտածում քո գիտնալու բանն է»։ իսկ այ տեղ՝» Չպէտք է մտածես Աստուծոյ Որդու մասին այն, ինչ որ դու ես մտածում»)։

Ընդհանրացրէք միայն այս եզակի փաստը, ընդունեցէք իբրեւ ընդհանուր կանոն, որ եկեղեցու որոշմանը ուղեկցում է քաղաքական որոշ հետեանքներ։ Այն ժամանակ պետութիւնը կանխատեսութեամբ պէտք է իւր քրեական պատիժները ներկայացնէ կամ եպիսկոպոսների ամէն մի ժողովի, որ սուրբ ժողովի անուն է բերացնում, և կամ ոչ թէ բոլոր ժողովներին, այլ նրանցից մի քանիսի կարգադրութեանը։

Առաջին պատասխանի վտանգաւոր հետեանքները շատ ակնյայտնի են։ Բայց և պակաս վտանգաւոր չէ ընդունել որ այդպիսի նշանակութիւն միայն մի քանի ժողովներ պէտք է ստանան։ Այդ ժամանակ հարց է առաջանում որոշման նշանների (Критеріи) մասին և պետութիւնը, և իհարկէ մի միայն նա, իրաւունք է ստանում զանազանելու իսկական ժողովները կեղծ ժողովներից, օրինական ժողովները հակաօրինական գումարումներից։ Պետութեան համար ընդարձակ ճանապարհ է բացւում եկեղեցու գործերի մէջ

խառնուելու: Չէ՞ որ նա պէտք է իմանայ թէ իւր հոգի ձեռքով սեւ է օգնում, հետևապէս նա պէտք է ձեռնհասութիւն ունենայ եկեղեցու դաւանաբանական և վարչական հարցերի նկատմամբ, որոնք կարող են ժողովների մէջ քննութեան ենթարկուել: Եւ պետութեան ժողովների վերայ ունեցած աշտպիտի հսկողութեան և ձգտումների դէմ ըստէութեան եկեղեցու ներկայացուցիչները չէին կարող բողոքել միևնոյն ժամանակ առանց հերքած լինելու նրա իրաւունքները ճշման միջոցներով եկեղեցուն հովանաւորութիւն ցոյց տալու համար:

Ասեա թէ, եկեղեցական կանոնաւոր քաղաքականութեան անխախտ սահմանը անցնում է պետութեան ունեցած այն երկու իրաւունքների միջով, որոնցից մէկով նա կարող էր օժանդակութիւն ցոյց տալ այն համայնքներին, որոնց նա բարերար էր ճանաչում, և միւսով պատժել այնպիսիներին, որոնք հեռու էին այդ համայնքներից, լոկ հեռացած լինելուն համար: Այդ սահմանը խախտուեց 325 թուին:

Կոստանդինն ըստ երևոյթին Նիկիական ժողովի ժամանակ բուռնական հեռացել էր այն հայեցակէտից, որ նա ունէր 313 թուին: Այնուամենայնիւ 325 թուին էլ նա իրեն արժանի բարձրութիւնից ցած չէր կանգնած, — այնքան ինքնազսպութիւն ունեցաւ, որ կարողացաւ մերժել այն եպիսկոպոսների վերայ կայանայիք դատաստանը, որոնք դիմում էին նրան միմիանց դէմ բազմաթիւ խնդիրներով: Կայսրը իւր յարգանքը դէպի եկեղեցու այս ներկայացուցիչների բնաւորութիւնն արտայայտեց այս խօսքերով. «Եթէ ես մի որ և է եպիսկոպոսի տեսնէի հէնց շնութիւն անելիս, ես կժաժկէի նրան իմ ծիրանիով, որպէսզի միայն այդ տեսարանը չդաշխազդեցնէ տեսնողներին»:

Ժողովի հայրերին տուած ճաշի միջոցին նա ասաց. «Դուք — եկեղեցու ներքին գործերի վերայ եպիսկոպոսներ էք, ես — Աստուծուց կարգուած եմ եպիսկոպոս արտաքին գործերի վրայ»: Այս խօսքերին խիստ կարեւոր նշանակութիւն են տալիս, որ շատ էլ ուղիղ չէ: Այս աւելի շուտ

մի հանաք, մի սիրալիր խօսք էր, քան եկեղեցական քաղաքականութեան լուրջ ծրագիր: Յամենայն դէպս ներքողասաց — սլամաքան Նւսերիտսի խոստովանութեամբ այս խօսքը ճիշտ կերպով բնութշում է Կոստանդնի բռնած դիրքը: Այս խօսքերի միտքը մութն են դառնում: Ամենալաւ մեկնաբանը այդ խօսքերի, ի հարկէ, ինքն Նւսերիտն է, իսկ նրա կարծիքով, այդ սկզբունքից ծագում էր Կոստանդնի հոգացողութիւնն այն մասին, որքան որ նրանից էր կախում, առաջնորդել բոլոր հպատակներին փրկութեան ճանապարհով, — նրա այն օրէնսդրութիւնը, որի նպատակն էր հեթանոս աստուածաշատութիւնը սահմանափակել, այն կենդանի մասնակցութիւնը, որ նա եկեղեցական ժողովներում ունեցաւ, յորդորելով բոլորին միաբանութեան, համոզելով համառոդներին, իւր բարեացակամութեան նշաններով քաջալերելով նրանց, որոնք հաշտ արամադրութիւն էին արտայայտում: Միևնոյն նպատակով էլ Կոստանդինն իրեն թոյլ էր տալիս անել եկեղեցական բնաւորութիւն ունեցող գործեր՝ իւր կոնսիստորիայում կարգում էր Սուրբ Գիրքը, պալատականներին քարոզներ էր կարդում, հոգս էր քաշում, — ըստ իւր հասկացողութեան, քրիստոնէութեան տարածման համար, իւր դօրքի համար աղօթքներ էր կադմում և այլն: Այդպիսով Կոստանդնի եպիսկոպոսական իշխանութիւնը տարածւում էր նրա բոլոր հպատակների վերայ, որպէս հեթանոսների, նմանապէս և քրիստոնէաների, և սահմանափակւում էր ոչ թէ միայն քաղաքական կողմով, նրանց քաղաքացիական իրաւութիւններով, այլ ամենից առաջ տաւել ևս տարածւում էր կրօնական յարաբերութիւնների վերայ. արտաքին գործոց եպիսկոպոսը սահմանափակւում է հեթանոս պաշտամունքի ազատութիւնը, — ժողովներ է հրավիրում և նրանցմէջ կենդանի մասնակցութիւն ունենում:

Կոստանդինն իւր յարաբերութիւնների մէջ դէպի քրիստոնէական եկեղեցին միևնոյն ուղղութեամբ է դնում. նա պաշտօնագուրկ էր անում արիոսականներին, աքսորում էր նրանց և վերադարձնում է նրանց այն ժամանակ, երբ

Նրանք ցանկութիւն են յայանում զղջալու, ինքն անձամբ է ընդունում զղջացած Արիսից հաւատի դաւանանքը, կարգադրութիւններ է անում նրան Կոստանդնուպօլսի և Աղէքսանդրիոյ եկեղեցիներին միացնելու մասին: Սակայն Ս. Աթանաս Աղէքսանդրացու աքսորման համար նրան շատ մեղադրել չի կարելի: Այս գործի պատմութիւնը ծառայում է իբրեւ նոր փաստ, որ կայսրն իրեն շրջապատող եպիսկոպոսներից բարոյապէս բարձր էր կանգնած. նա եպիսկոպոսներին իրաւունք տուեց եկեղեցական կարգով քննել Աթանասի վերայ բարդած մեղադրանքները և Աղէքսանդրիոյ եպիսկոպոսը ստիպուած էր կայսեր մօտ փրկուել այն արդարութիւնը, որը նա չգտաւ իւր եղբայրակիցների ժողովում: Կայսեր վերջին կարգադրութիւններն այս գործի նկատմամբ խիստ բնորոշ են. եթէ նա Աթանասին Գալլիա չաքսորէր, մեղադրելով նրան քաղաքական յանցանքների համար, այլ թոյլ տար այդ գործին իւր բնական ճանապարհով ընթանալու, այն ժամանակ աշխարհական կայսեր մօտ դատաւարանի օրը աշխարհը եպիսկոպոսների մի ամբողջ ժողով կտեսնէր:

Եկեղեցու յարաբերութիւնները պետութեան հետ, ինչպէս նրանք Կոստանդնի թագաւորութեան ժամանակ առաջ եկան, շատ էլ անթերի չէին: Կայսրը հրաժարւում է իրեն բռնած սկզբնական դրութիւնից, եկեղեցական կեանքի համար բարերար ազդեցութիւն ունեցող չեզոքութիւնից, և իրեն թոյլ է տալիս բաւական յաճախ եկեղեցու գործերի մէջ խառնուելու: Դեռ ևս եկեղեցու զաւակ չգարձած, նա գործում էր որպէս նրա հովանաւոր, նոյն իսկ որպէս նրա ղեկավար: Կայսեր յարաբերութիւններն եկեղեցու համար յարմար պայմաններ ստեղծելով չէ սահմանափակւում: Սակայն դժուար է ասել և այն, թէ արդեօք եկեղեցական գործերին խառնուելը իրաւական բնաւորութիւն ստացաւ նրա դիտակցութեան մէջ: Այն միջոցովորդը, որի մէջ ապրում և գործում էր Կոստանդին մեծը, շատ բարեպատեհ էր իշխանութեան զարգացման համար ի հաշիւ եկեղեցու: Հաւանական է, որ Կոստանդնի շրջա-